



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԹԵԼԵԹՈՆԻՆ ՀԱՄԱՐ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ ԻՐ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

### **ԱՐՑԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ԱՐԱՅԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԱՅՑԵԼԵՑ**

Շուշիի նուիրուած թելեթոնիս ներկայ ըլլալու նպատակով, Լոս Անճելըս իր այցելութեան առիթով, Արցախի վարչապետ Արայիկ Յարութիւնեան Երեքշաբթի, 24 Նոյեմբերի կեսօրին այցելեց Ազգային Առաջնորդարան եւ հիւրընկալուեցաւ մեր Թեմի ժողովականութեան կրօնական ու աշխարհիկ ներկայացուցիչներուն կողմէ:

Արցախի վարչապետը առաջին անգամ ըլլալով էր որ կ'այցելէր Ազգային Առաջնորդարան: Պատուիրակութեան մաս կը կազմէին Տեարք Դաւիթ Պապայեան (Արցախի նախագահի տեղեկատուական բաժանմունքի վարիչ), Ռոպերթ Աւետիսեան (Միացեալ Նահանգներու մօտ Արցախի ներկայացուցիչ), Արա Վարդանեան («Հայաստան» Համահայկական Հիմնադրամի գործադիր տնօրէն) եւ Սարգիս Գոթանճեան (Հիմնադրամի Լոս Անճելըսի գրասենեակի գործավար):

Կրօնական ժողովի ատենապետ Գերայ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան, իբրեւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Սարտիրոսեանի ներկայացուցիչը՝ դիմաւորեց հայրենի հիւրերը: Անոր կողքին էին Կրօնական ժողովի անդամներ՝ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան, Արժ. Տ. Վիգէն Ա. Քիւյ. Վասիլեան, Արժ. Տ. Ռազմիկ Քիւյ. Խաչատուրեան, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան, Ազգային Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան, անդամներ՝ Տեարք Միեր Տէր Յովհաննէսեան, Վարուժան Տէր Սիմոնեան եւ Խաչիկ Երեցեան, Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմին ներկայացուցիչ Տիկին Մակի Սարգունի, Ազգ. Առաջնորդարանի յանձնախումբերու ատենապետներ՝ Տեարք Վահան Պզտիկեան եւ Հրայր Ճերմակեան, եւ Տիկնանց Օժանդակ Մարմինի անդամներ:

Հիւրերն ու հիւրընկալներ առաջին հերթին առաջնորդուեցան Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն մատուռ, ուր տեղի ունեցաւ աղօթք: Ապա, հիւրերը ծանօթացան Ազգ. Առաջնորդարանի բաժանմունքներուն: Պաշտօնական հանդիպումը տեղի ունեցաւ դահլիճին մէջ:

Ըրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Գերշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան առաջին հերթին ընթերցեց Առաջնորդ

Սրբազանին ողջոյնի գիրը: Ծանօթ է որ Առաջնորդ Սրբազանը ժողովական աշխատանքներու համար կը գտնուէր Անթիլիաս: Իր խօսքին մէջ, Առաջնորդ Սրբազանը կ'ողջունէր վարչապետին այցելութիւնը եւ կը վերահաստատէր մեր մայր Հայրենիքին ու Արցախի զօրակցութեան Ազգ. Առաջնորդարանի կեցուածքը, միաժամանակ վեր առնելով Շուշիի տեղն ու արժէքը՝ մեր պատմութեան ու ներկային մէջ:

Ողջոյնի խօսք արտասանեցին Գերպ. Տ. Միւռն Տ. Կրդ. Ազնիկեան, Ազգ. Կեդր. Վարչութեան ներկայացուցիչն ու Ազգ. Վարչութեան ատենապետը: Հայր Միւռն յանուն ժողովականութեան ողջունեց յարգելի հիւրերը եւ վեր առաւ մեր եկեղեցական ու ազգային կեանքին մէջ Ազգ. Առաջնորդարանին դերակատարութիւնը: Ան յայտնեց, որ այս հաստատութիւնը, ինչպէս հայ ժողովուրդի բոլոր զաւակները, Արցախի կողքին են անոր պայքարին թէ խաղաղութեան երթին ընթացքին, եւ հաւաստեց որ ինչպէս անցեալ տարիներուն, այս հանգրուանին եւս, մեր եկեղեցիները, դպրոցներն ու գործակից միաւորները պիտի մասնակցին թելեթոնին:

Տիար Խաժակ Տիքիճեան յայտնեց, որ յարգելի վարչապետին գործունեութեան մասին արդէն ծանօթ ենք մամուլէն ու իր կատարած աշխատանքներէն: Ան այս առիթով անդրադարձաւ այն մտահոգութիւններուն, որոնք կը բխին Արցախի շուրջ տեղի ունեցող զարգացումներէն: Ան յոյս յայտնեց, որ Արցախի իշխանութիւնները յաջողին խաղաղութեան ու բարգաւաճման իրենց ծրագիրներուն մէջ, ընդհանուր զարգացումները անախորժ անակնկալներու դիմաց չդնեն մեզ ու, վերջապէս, յաջողութիւն մաղթեց Շուշիի ի նպաստ թելեթոնին:

Տոբթ. Կարօ Յակոբեան, իր կարգին ողջունելով վարչապետն ու հիւրերը, հակիրճ կերպով խօսեցաւ Ազգ. Առաջնորդարանի հովանին տակ գործող եկեղեցիներուն ու դպրոցներուն, ինչպէս նաեւ հրատարակչական աշխատանքներու մասին, որուն մէջ կարելոր տեղ ունին դասագիրքերը: Ան նաեւ անդրադարձաւ այն իրողութեան, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, գործակցութեամբ թեմերուն, Արցախի մէջ յանձն առած է «Նոր Կիլիկիա» գիւղի վերանորոգութեան աշխատանքը: Այս մասին, նորագոյն տեղեկութիւնները կը հաղորդեն, որ մօտիկ ապագային, կարգ մը բնակարաններու յանձնումը տեղի պիտի ունենայ կարիքաւորներուն: Տոբթ. Կարօ Յակոբեան ընդգծեց, որ այս նախաձեռնութիւնը պերճախօս ու գործնական արտայայտութիւն մըն է Արցախին զօրավիգ կանգնելու մեր կեցուածքին:

Վարչապետ Ա. Յարութիւնեան շնորհակալութեան խօսք ուղղեց հիւրընկալումին ու ընդհանրապէս »Հայաստան« Յիմնադրամին ճամբով վերջին տասնամեակին Արցախին տրամադրուած օժանդակութեանց համար: Ան հակիրճ կերպով անդրադարձաւ Արցախի վերականգնումի աշխատանքներուն, տալով օրինակներ, յիշատակելով, որ կարգ մը ծրագիրներ այնքան հին են, որ կապուած են... ցարերու օրերուն տրուած խոստումներու: Ան յատուկ կարելորութեամբ վեր առաւ Շուշի վերականգնումին կարելորութիւնը, շեշտելով, որ այս քաղաքը մեր պատմութեան մէջ ունեցած է փառաւոր տեղ, հետեւաբար, պէտք է վերականգնել զայն, ի մի բերելով ողջ հայութեան ձեռքերը, որպէսզի

անհկա պատիւ բերէ հայութեան: Ան այս առիթով անդրադարձաւ նաեւ քաղաքական իրադարձութեանց, նշելով, որ պետք է ունենալ հզօր երկիր, որպէսզի կարելի ըլլայ իրականացնել մեր երազները, հզօր երկրի կերտումին համար կարելոր է ունենալ հզօր բանակ, դեմ դնելու համար Ազրայէճանէն եկող մարտահրաւերներուն: Վարչապետը այս ծիրին մէջ վեր առաւ Սփիւռքի կարելորութիւնը՝ հայկական ընդհանուր հզօրանքի գոյառման մէջ, նշելով, որ հայրենիքին նեցուկ կանգնող Սփիւռքը հակակշռողի դեր ունի Ազրայէճանի հզօրանքին դիմաց:

Վարչապետ Ա. Յարութիւնեան անդրադարձաւ նաեւ Հայաստան-Թուրքիա ծանօթ զարգացումներուն, ըսելով, որ համաձայնագիրներուն բացած ուղին գնահատելու համար, պետք է որոշ ժամանակ տալ, սակայն նաեւ վեր առաւ սահմաններու բացման կարելորութիւնը, նշելով, որ անհկա զարկ պիտի տայ տնտեսութեան, իսկ հզօր տնտեսութիւնը կենսական է հայրենիքի զարգացման ու հարցերուն դիմագրաւման համար: Ան հաւաստեց, որ Յեղասպանութեան ու Ղարաբաղի հարցերը առնչուած չեն ծանօթ համաձայնագիրներուն, ու ասելին, «պետք չէ կասկածով մօտենալ նախագահ Սերժ Սարգսեանի որդեգրած ուղիին, նկատի ունենալով, որ ան եղած է Արցախի պաշտպանութեան մասնակից ու կարելոր դեր ունեցած է Հայաստանի բանակին մէջ»: Ան հաւաստեց, որ Հայաստան ունի լաւ առաջնորդ՝ յանձնին նախագահին, որ լաւապէս կը տիրապետէ քաղաքական ու այլ ասպարեզներուն ու կը գործէ ի նպաստ հայրենիքին:

Պաշտօնական խօսքերու փոխանակումէն ետք, վարչապետը յաւելեալ տեղեկութիւններ տուաւ Արցախի վերակառուցման աշխատանքներուն մասին, պատասխանելով ներկաներու հարցումներուն: Ան հաւաստեց, որ հայրենադարձութիւն տեղի կ'ունենայ դեպի Արցախ եւ շեշտեց այս գործընթացին թափ տալու կարելորութիւնը:

Հանդիպումին պաշտօնական բաժինին աւարտէն ետք, Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը ներկաները հիւրասիրեց ճաշով:

## **PRIME MINISTER OF KARABAKH ARAIK HARUTYUNYAN VISITS THE PRELACY**

On the afternoon of Tuesday, November 24<sup>th</sup>, 2009, Prime Minister of the Nagorno-Karabakh Republic Araik Harutyunyan visited the Prelacy where he was welcomed by clergy and council members. The Prime Minister is currently in Los Angeles ahead of the upcoming Armenia Fund Telethon.

The Prime Minister's delegation included Mr. Davit Babayan (spokesman to the NKR President), Mr. Robert Avetisyan (representative of the NKR to the United States), Mr. Ara Vardanyan (Executive Director of Hayastan All Armenian Fund), and Mr. Sarkis Kotanjian (Public Relations Director of Armenia Fund U.S.).

The delegation was welcomed by Very Rev. Fr. Muron Aznikian representing H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, Very Rev. Fr. Barthev Gulumian, Archpriest Fr. Vicken Vassilian, Rev. Fr. Razmig

Khatchadourian, Central Executive member Mr. Khajag Dikijian, Executive Council Chair Dr. Garo Agopian and members Mr. Meher Der Ohanessian, Mr. Varoujan Der Dimonian, and Mr. Khatchig Yerezian, Board of Regents member Mrs. Maggie Sarkuni, Mr. Vahan Bezdikian, Mr. Herair Jermakian, and members of the Ladies Auxillary.

Upon their arrival, the guests gathered at the St. Dertad and St. Ashkhen Chapel for prayer. They were then given a tour of the headquarters and became familiarized with the various departments and offices.

The official meeting began with the reading of the Prelate's welcoming remarks by Very Rev. Fr. Barthev Gulumian. As reported earlier, the Prelate was in Lebanon participating in meetings at the Catholicosate.

Remarks were also delivered by Very Rev. Fr. Muron Aznikian, Mr. Khajad Dikijian, and Dr. Garo Agopian, all of whom reaffirmed the support of the Prelacy and our community to the welfare and progress of Karabakh.

Prime Minister Harutyunyan conveyed his thanks for the warm welcome and for the assistance of the community to Karabakh via Armenia Fund. He reported on rebuilding projects currently underway in Karabakh and of the current political situation with regards to Azerbaijan, and also touched upon the Armenia-Turkey Protocols. The Prime Minister then took the time to answer questions and give further explanation on specific projects geared at rebuilding and strengthening Karabakh.

After the meeting the Prime Minister was hosted to a lunch organized by the Ladies Auxiliary.